

սահմանուած էին մառանին մէջ մեր տե-
սած պարպատուն կարասները (աստ, 19
-23): Գուսանական եւ արբեցողական ա-
խորժականներն այս տեղ զիրար կը զրգռեն
փոխանակաւ. եւ ըմպանականներն անդադար
կը լցուին ժիր մատոռակաց ձեռք՝ «յըն-
տիր եւ համեղ գինեաց» (Խոր, 76) կամ
«մեծագին գինեաւն» (Մանգ, 74), որ կը
լինէր «պարզ» (Փրպ, 331) կամ «պար-
զեալ» (Փաւս, 123), այն է զսուած, լա-
ւագոյնս զգացնելու համար իւր համն եւ
ոյժը: Ու կ'ըմպեն զայն «անապակ» (նոյն,
216), այս ինքն առանց ջրոյ¹, հակառակ
բարի սովորութեան Հրէից (Առկ, Թ, 2-5)
եւ ուրիշ ազգաց (աստ, 71. Գար, Ա,
1373): Աղով ալ անբաւական, անուշա-
համ խառնրդներով զայն աւելի հրապու-
րիչ եւ ազդեցիկ կ'ընէին (աստ, 22), ինչ-
պէս Ասորիք կը զրգռէին իրենց փղերը
«խնկեալ գինուով կնդրկախառն» (Գ Մակ,
Ե, 25): Եւ այս բոլորին բնական հետե-
ւանքը կը լինէր՝ «Թմբրիլ եւ յիմարիլ»
(Մանգ, 74):

Արբեցութիւնը, այս գոհհիկ ախտը, տե-
սակ մ'օրէնք, արարողութիւն մը, ազ-

1. Աղոր հետ թերեւ ճաշակի ու վարժութեան ներ-
քին կապ մ'ունէր մեր նախնեաց պատմական ընդդիմու-
թիւնը Ս. Բաժակի ջրախառնութեան: